

թեն հիւսիսային Եւրոպայէն դէպի Պէրպէրիստան և յեգիպտոս : Այս թռչնոց ճանապարհին ուղղութիւնն է հարաւ-արեւելք և հիւսիս-արեւելք :

Թատերախօս գործի. — Անցեալ օր Պ. Էտիսըն մինչդեռ փարիզու աշխարհանդիսին մէջ հեռախօս գործին երու արահակը կ'այցելէր՝ անկարծելի բան մը պատահեցաւ : Պէրթըն հեռախօս գործւոյն մի հանճարեղ գործածութիւնը ներկայացուց հռչակաւոր ամերիկացւոյն : Այս նոր գործին կը կոչուի Թատերախօս. քիչ ատենէն այս գործին քաղաքին այլ և այլ տեղերը պիտի հաստատուի. 50 հարիւրեակ վճարելով՝ ամէն մարդ կրնայ հինգ վայրկենի չափ լսել տեսարանին մէջ երգուած երաժշտութիւնը : Ներկայացուցած ժամանակ գործին նուագահանդիսի մը հետ հալորդակցութեան մէջ էր, որով Պ. Էտիսըն ամենամեծ ճշգրտեամբ լսեց բաւական հեռաւորութեամբ տրուած նուագահանդէսն. մեծանուն ելեկտրագէտն աղաչեց հնարուղաց որ այս գործին 'ի Նիւ-Եօրք ևս հաստատեն : Արդեօք երբ պիտի լսենք անդրատլանդեան նուագածութիւնքը :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անգղիա. — Այս ամոնոյս քաղաքական նշանաւոր դէպքն եղաւ յԱնգղիա Գերմանիոյ կայսեր Գուլիէլմոսի այցելութիւնն առ Վիկտորիա. այս այցելութիւնը ընդունեցաւ բրիտանական մեծ և հզօր ժողովուրդը իւր արժանաւայել պատուով : Գերմանիոյ արդի կայսեր պատերազմասէր և բուռն բնութիւնը ամէն պետութիւն յայտնի գիտնալով մեծամեծ և ահեղ պատերազմական հանդիսօք պատուեցին զինքը : Անգղիա ալ երիտասարդ վեհապետին աչաց առջև պարզեց զարդ շտեմնուած տեսարան մը. 100 նաւերէ աւելի բազկապալ նաւատորմ մը, որ 'ի մի հաւաքուեր էր անհաւատալի երազութեամբ երեք օրուան մէջ՝ կատարեց իր պատերազմական շարժումները ողջունելով զկայսրն : Գուլիէլմոս մեծ ուրախութիւն և գոհութիւն յայտնեց միեռակայ անձանց՝ այսպիսի մեծ և շտեմնուած նաւահանդիսի մը համար. զարմացաւ և գովեց արդէն Անգլիացւոց բնածին և ընդաբոյս ծովային շարժմանց կատարելութիւնն և ճշգրտութիւն համար. և յետ ամենասիրալիք ընդունելութեան 'ի կողմանէ թագուհւոյն, ջերմ համակրանօք մեկնեցաւ յԱնգղիայէ :

Բնական է, այսպիսի այցելութիւն մը բազում մեկնութեանց առիթ եղաւ : Անգղիոյ խորհրդարանին մէջ երեսփոխանաց մին հարցուց կառավարութեան. « Արդեօք ըստ զրուցաց ճիշդ է որ Անգղիա ևս ծածուկ և գաղտնի դաշնագրութեամբ յարեցաւ յերբակի

գաշնակցութիւն» . այս հարցման կառավարութեան պատասխանն այս եղաւ . « Անդգիւս աշխարհիս չորս կողմը անբաւ շահեր ունենալով չի կրնար միանալ կամ գաշնակցիլ առանձին կառավարութեան մը հետ , 'ի զիստ և 'ի կորուստ բազմաթիւ շահուց իւր հպատակաց . իսկ եթէ պատեւրազմ՝ ծագի դժբաղդաբար , բնական է Անդգիւս պիտի դիմէ այն կողմը՝ ուր է իւր շահն : »

Գերմանիա . — Գերմանիոյ կայսրն յԱնգղիայէ դառնալէն վերջը՝ գնաց 'ի Ողորդապետի , և անդ մեծ զօրահանդէս մը տեղի ունեցաւ . քաղաքացիք ամէն դասակարգի փութացին մեծամեծ հանդէսներով ընդունել իրենց վեհապետն . Գուլիէլմոս իւր ճառախօսութեան մէջ միտք ունի բովանդակ եւրոպիոյ առաջարկել զէնքնկեցութիւն . 'ի Գերմանիա նշանաւոր քաղաքական դէպք մի ևս եղաւ , որ է՝ Աւստրիոյ Փրանկիսկոս — Յովսէփ կայսեր այցելութիւնն առ Գուլիէլմոս :

Գաղղիա . — Ի փարիզ կատարուեցաւ այս օրերս արդէն ծանուցեալ մեծ հացկերոյթն . 13,000 քաղաքապետք , որոց կը նախագահէր ինքն իսկ Գառնոյ , խմբեցան եղբայրաբար 'ի մի սեղանակցութիւն . Նախագահն սիրուն ճառ մը խօսեցաւ քարոզելով զխաղաղութիւն և զյառաջագիմութիւն Գաղղիոյ . իսկ գերագոյն Ատեանն՝ որոյ յանձնուած էր Պուլանժէ զօրավարին և իւր կողմնակցաց դատը՝ այս վերջին ամսոյս մէջ մեծ փութով և ջանքով յառաջ տարաւ սոյն հռչակաւոր դատը , թէ զՊուլանժէ և թէ իւր կողմնակից զխաւորները , զՏիլլոն , զՏըրուլէտ և զայլս դատապարտեց յաքսոր . Պուլանժէ , ինչպէս յայտնի է այժմ կը գտնուի յԱնգղիա և կ'ըսուի թէ վախճալով որ անգղիական կառավարութիւնը զինքը մատնէ հասարակապետութեան ձեռքը , մտադիր է երթալ յԱմերիկա Գերագոյն ատեանը յետ դատապարտելու այս քաջ զօրավարը , բազմաթիւ այլ յայտնութիւններ ալ գտաւ , և մեծն այն է՝ որ նոյն իսկ բանակին մէջ բազմաթիւ սպայք կողմնակից են Պուլանժէի . Ընդհանրապէս կը կարծուի թէ այս վերջին և անակնկալ հարուածով վերջացաւ իսպառ պուլանժէականաց խնդիրը . սակայն այս բանիս ստուգութիւնը՝ ապագան պիտի ցուցնէ :

